Նաիրա

Մովսիսյան

**ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

***Մարտավարական հնարքներ.***

# ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ուսուցիչ ______________________

| Առարկա ՇԱԽՄԱՏ | | |
|---|---|---|
| Դասարան 4-րդ Ա, Բ, Գ, Դ | Ուս. տարի | |
| Բաժին | **ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ** | |
| Թեմա | **Մարտավարական հնարքներ** | |
| Դասեր | **Դաս 9-10 Ծանրաբեռնված խաղաքարեր (2 ժամ)**<br>**Դաս 11 Կրկնակի հարված (1 ժամ)**<br>**Դաս 12 Հրապուրում (1ժամ)**<br>**Դաս 13 Շեղում (1ժամ)**<br>**Դաս 16-17 Անցունակ զինվորը` որպես մարտավարական հնարք (2 ժամ)**<br>**Դաս 32-33 Հավերժական շախ (2 ժամ)**<br>**Դաս 20-21 Ճառագայթային գրոհ (2 ժամ)**<br>**Դաս 22-23 Միջանկյալ շախ (2 ժամ)**<br>**Դաս 34-35 Ծուղակներ. «Թագուհին ծուղակում» (2 ժամ)**<br>**Դաս 36-37 Ծուղակներ. Այլ խաղաքարերը ծուղակում (2 ժամ)**<br>**Դաս 40-41 Մատ վերջին հորիզոնականում (1 ժամ)**<br>**Դաս 42 Խեղդուկ մատ (1 ժամ)** | |
| Բաժնի նպատակը | Զարգացնել սովորողների որոնողական գործունեությունը, վերլուծական կարողությունները:<br>Խթանել այլընտրանքային մտածողության զարգացումը:<br>Ոչ ստանդարտ իրավիճակներում լուծումներ գտնելու կարողություն ձևավորել:<br>Սովորողների մոտ ձևավորել հմտություն գնահատելու տարբեր իրավիճակներ:<br>Խթանել ստեղծարար մտածողության զարգացումը: | |
| Դասի նպատակը | Սովորողների միջոցով բացահայտել նոր նյութը, զարգացնել տարբեր իրավիճակներ ռեալ գնահատելու և այլընտրանքային լուծումներ գտնելու կարողություններ: Հասնել Մարտավարության բաժնի վերջնարդյունքներին: | |
| Վերջնարդյունքներ | Արդյունքում սովորողը պետք է | |

| | |
|---|---|
| | կարողանա՝<br>• Ռեալ **գնահատել, վերլուծել** իրավիճակը<br>• **Որոնել** և **գտնել** մարտավարական հնարքներ ելնելով դիրքի գնահատումից, **իրականացնել** մարտավարական հնարքը<br>• **Ստեղծել** մարտավարական հնարքներ |
| Ընդհանրական խաչվող հասկացությունները: | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Մարտավարական իրավիճակների ստեղծում և մոդելավորում:<br>**Համակարգեր և մոդելներ**<br>Մարտավարական մոդելները հասկանալու և կիրառելու հմտություններ:<br>**Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում**<br>Յուրաքանչյուր որոշման և քայլի հիմքում գործող մեխանիզմների կիրառում:<br>Մարտավարական իրավիճակներում պատճառահետևանքային կապերի վերհանման և վերլուծության հմտությունների ձևավորում: |
| Միջառարկայական կապերը | **Մայրենի լեզու** – Անվանումները կարդալու, մտապահելու, սեփական մտքերը գրագետ, տրամաբանված և համոզիչ արտահայտելու կարողություն: Նորի ստեղծում:<br>**Մաթեմատիկա** - Խնդրի պայմանը և պահանջը բացահայտելու և լուծելու կարողություն: Խնդրի լուծման փուլերը պլանավորելու կարողություն:<br>**Արվեստ** - Նորի ստեղծում: Գեղեցիկի ընկալում: |
| Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ | Շախմատի ցուցադրական խաղատախտակ խաղաքարերով, շախմատի խաղատախտեր խաղաքարերով, դասագիրք, աշխատանքային տետր: |
| Ուսուցման մեթոդներ | Օգտագործելով «Սոկրատյան մեթոդ»-ը՝ մանտիկայով սովորողների միջոցով բացահայտել նոր նյութը:<br>Զրույց, մտքերի տարափ, հարցադրումներ: Մրցակցային ուսուցում: Խմբային աշխատանք: |

| | |
|---|---|
| Առաջարկվող գործունեության ձևեր | Մարտավարական խնդիրների լուծում: Մարտավարական խնդիրների ստեղծում: Աշխատանք աշխատանքային տետրերում: Քննարկումներ տրամագրերի շուրջ: |
| ԿԱՊԿՈՒ աշակերտներ | |
| Տաղանդավոր աշակերտներ | Ինքնուրույն աշխատանք Իվաշչենկո-2 գրքից, ուսուցչի օգնականի դերի ստանձնում |
| Գնահատում | Իրականացվում է ձևավորող և միավորային գնահատում: |

**Դասի ընթացքը**

- Աշակերտների հաշվառում **2 րոպե**
- Խթանում, կամ նախորդ նյութի ամփոփում հարցերի միջոցով **5 րոպե**
- Մարտավարական հնարքի անվանման ընկալում մտագրոհի միջոցով **5 րոպե**
- Նոր նյութի բացահայտում տրամագրերի ակտիվ քննարկմամբ **15 րոպե**
- Նյութի ամրապնդում, տրամագրերի լուծում աշխատանքային տետրերում **15 րոպե**
- Ամփոփում և գնահատում **3 րոպե**

**Կարևոր նշումներ**

1. Նշված բազմաթիվ մեթոդներով իրականացնում ենք մարտավարական հնարքների դասերը:
2. Դասը չենք բացատրում, այլ բացահայտում ենք աշակերտների միջոցով:
3. Օգտագործում ենք «Սոկրատյան մեթոդ»-ը՝ մանտիկան:
4. Գլխավոր հնարը՝ աշակերտների կողմից իրավիճակի վերլուծություն է. դիրքի գնահատումը, գնահատման հիման վրա հետագա գործողությունների պլանավորումն է, հնարքի որոնումը, պատճառ-հետևանքային կապի վերլուծումն է, և ալգորիթմի ստեղծումն ու իրականացումը:
5. Շատ կարևոր է, որ ուսուցիչը լսելով բոլորի կարծիքները տրամագրի վերաբերյալ, անպայման ընդծի կարևորագույն մտքերը, շեշտադրում կատարի և ամբողջական պատկերը ամփոփի, շատ կարևոր է, որ ուսուցիչը ամփոփման ժամանակ կապի իրավիճակը իրական կյանքի հետ:
6. Եթե որևիցե դիրքի գնահատումը չի բերում տրամագրի լուծման, ուսուցիչը օգտագործում է ուղղորդող հարցերի տեխնիկան:

**Տրամագրերը ուսումնասիրելիս շակերտներին տրվող հնարավոր հարցերի օրինակներ, որոնք ներգավում են մեծ քանակով աշակերտների.**

- Տրամագրում ո՞ր արքան է ավելի ապահով, իսկ որը՝ վտանգված:
- Ո՞ր կողմի խաղաքարերն են ավելի ակտիվ և համագործակցող:
- Ո՞ր կողմի զինվորային կառուցվածքն է ավելի լավը:
- Ի՞նչ թուլություններ ունեն կողմերը:
- Ո՞ր թութլություններն են ավելի կարևոր, իսկ որո՞նք են երկրորդական:
- Ո՞ր կողմը ունի առավելություն, ինչու՞:
- Ինչպե՞ս օգտագործել թուլությունները:
- Ինչպե՞ս օգտագործել ուժեղ կողմի առավելությունները:
- Ի՞նչ մարտավարական հնարքներ են միահյուսվել: